

Դաս 1. Նախապատրաստել և վարել ժողովներ

Դուք կարող եք ուսուցանել այս դասն ամբողջությամբ կամ բաժանել այն հատվածների: Հարմարեցրեք դասը տեղի պայմաններին և ձեր քվորումի կամ դասարանի նախագահության կարիքներին, տարիքին և հասկացողությանը:

ՏԵՐԸ ՀՐԱՎԻՐՈՒՄ Է ՄԵՋ ԿԱԶՄԱԿԵՐՊԿԵԼ

Կարդացեք Վարդապետություն և Ուխտեր 88.119: Քննարկեք, թե «կազմակերպվեք» Տիրոջ հրահանգն ինչպես է վերաբերում քվորումի և դասարանի նախագահության ժողովներին: Մենք ի՞նչ կարող ենք անել մեր ժողովները կազմակերպելու համար:

ԺՈՂՈՎՆԵՐ ԾՐԱԳՐԵԼՆ ՕԳՆՈՒՄ Է ՄԵՋ ԿԱԶՄԱԿԵՐՊԿԵԼ ՏԻՐՈՋ ԱՇԽԱՏԱՆՔԸ

Օգնեք քվորումի կամ դասարանի նախագահությանը լրացնել օրակարգի նմուշ՝ իրենց նախագահության հաջորդ ժողովին նախապատրաստվելու համար: Միասին քննարկեք հետևյալ հարցերը.

- Ինչո՞ւ է կարևոր խորհել այն հարցերի շուրջ, որոնք տրված են օրակարգի նմուշում:
- Ուրիշ ի՞նչ ժողովների կամ միջոցառումների կարող ենք նախապատրաստվել այս եղանակով:
- Մենք ինչպե՞ս կարող ենք հրավիրել Սուրբ Հոգուն օգնել մեզ, երբ ծրագրում և վարում ենք ժողովներ: (Տես Մորոնի 6.9, Վարդապետություն և Ուխտեր 46.2):

Դուք կարող եք նաև հրավիրել նախագահության անդամներին նախապատրաստել օրակարգ քվորումի կամ դասարանի հաջորդ ժողովի համար, որը համապատասխանում է Եկ, *հետևիր ինձ. Ահարոնյան Քահանայության քվորումների և Երիտասարդ Կանանց դասարանների համար* ձեռնարկի յուրաքանչյուր դասի համառոտ շարադրանքին: Հրավիրեք նրանց մտածել թեմաների շուրջ, որոնք նրանք քննարկել են նախագահության իրենց ժողովի ժամանակ, որը նաև պետք է քննարկվի քվորումի կամ դասարանի անդամների հետ: Եթե ժամանակը թույլ է տալիս, կարող եք հրավիրել նրանց փորձարկել ժողով վարելը՝ օգտագործելով իրենց նախապատրաստած օրակարգը:

Պարբերաբար դուք կարող եք քննարկել, թե նախագահության անդամներն ինչ զգացողություններ ունեն կապված ժողովի հետ: Այդ քննարկման ընթացքում կարող եք տալ նմանատիպ հարցեր.

- Արդյո՞ք ժողովն իրագործեց մեր նպատակները:
- Մենք ի՞նչ արեցինք, որպեսզի հրավիրենք Հոգին մեր ժողովների ժամանակ: (Տես Վարդապետություն և Ուխտեր 6.32:)
- Արդյո՞ք մենք փորձեցինք ներառել բոլորին:
- Ինչպե՞ս կարող ենք բարելավել մեր ջանքերը:

ՕԺԱՆՂԱԿ ԱՂՔՅՈՒՐՆԵՐ

- *Ընդհանուր Ձեռնարկ. Ժառայել Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցում, 104, 11.3.4, ChurchofJesusChrist.org*